



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՌԱՍՏՐԱՆԻՆԻ ԶՄԻՌՆԻԱՅ ԴԱՐԱՆ 8 ՄԱՐՏ 1875

ԹԻԻ 1009

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Երբ որ օրագիրը զանազան համբաւներ հրատարակեցին ի մասին դիպուածական հրա-
ժարման Պիտմարք իշխանին ի պաշտօնէն՝ զոր
կըլարէ, իբրեւ մեծ ատենադպիր Գերմանական
կայսերութեան և իբրեւ նախագահ Բրուսիոյ
պաշտօնէից խորհրդոյն: Յիշեալ համբաւներն
ըստ մեծի մասին սխալ են. քանզի Պիտմարք
իշխանին իւր կրկին պաշտօնէն հրաժարելուն
ամենեւին խօսք չկայ, կըսէ Մեծօրէն Տէր-
օրագիրն. այլ Նորին Վսեմութիւնն ըստ խոր-
հրդոյ բժշկաց և թոյլութեամբ կայսեր ժա-
մանակի մը համար պիտի բնակի յամաւանդին
իւր որ ի վարձէն, իւր անձնական տկարութեւ
դարման տանելու համար՝ առանց ձեռքէ ձգե-
լու գտնօրէնութիւնն բարձր քաղաքականու-
թեան և Եւ որովհետեւ յիշեալ իշխանն պարտա-
ւորեալ է յարատեւ թղթակցութեան մէջ դըս-
տուի կայսեր հետ, որոշուեր է, Նորին Վեհա-
փառութեան այս ձանձրութիւնը թեթեւեղելու
համար, կայսերական իշխանին յանձնել զմի մասն
թղթակցութեան, որ շարունակ պիտի լինի ի
մէջ Գերմանիոյ կայսեր և Պիտմարք իշխանին:

Գերմանական ազգային երեսփոխանական ժո-
ղովոյն մէջ խորհրդակցութիւն լինելով դադրե-
ցուցին զտարեկան թոյլաներն առնելու եպիսկո-
պոսաց և կղերաց, որք անհնադանդութիւն կը-
ցուցնեն եկեղեցական օրինաց, սահմանադրա-
պէս հաստատելոյ ի կայսերութենէ:

Հռոմի Պապին վերջին չըջաբերական կոնդակն
պատճառ տուած պիտի լինի այս խիստ կարգա-
դրութեան. կոնդակ՝ որոյ դէմ հետեւեալ բողո-
քագիրն հրատարակեցաւ ի կաթողիկոսի անդամոց
երեսփոխանական ժողովոյն Բրուսիոյ:

«Ի ներկայութեան քահանայապետական կոն-

դակին ընդ ամսաթուով 5 փետրուարի 1875,
ստորագրեալ կաթողիկոսի անդամք Բրուսիոյ ե-
րեսփոխանական ժողովոյն՝ պարտք կը համարիմք
մեզ հրատարակել զյետագայ յայտարարու-
թիւնն: Կերպապէս կըմերժեմք և չեմք ընդու-
նիր թէ Գերմանիոյ կայսերութեան և Բրուսիոյ
թագաւորութեան մէջ հաստատեալ քաղաքա-
յին—եկեղեցական օրէնքն կատարելապէս կը-
կործանեն զՍահմանադրութիւնն եկեղեցւոյ և
բողոքովն կը ջնջեն զանոնաբարեւի իրաւունս
եպիսկոպոսաց: Դարձեալ կերպապէս կը բողո-
քեմք ընդդէմ ողորմաց, յառաջ բերելոյ ի
յիշեալ քահանայապետական կոնդակի. սկզբ-
բունք որք վստահի մէջ կը դնեն զիշխանու-
թիւնն, զՍահմանադրութիւնն և զգոյնութիւնն
տէրութեան: Կըբողոքեմք մատաւորապէս
ընդդէմ իրաւանց՝ զոր կը պահանջէ Պապն ոչինչ
և չեղած հրատարակելու զկառավարական օ-
րէնքն, որք սահմանադրապէս հաստատեալ են:

«Մեք ընդհակառակն համոզեալ եմք թէ կա-
թողիկոս եկեղեցւոյն վարդապետութիւնը յառ-
կապէս կը հրամայէ իւրաքանչիւր կաթողիկոս, որ
վարդական և պարտաւորիչ համարի՝ սահմա-
նադրապէս հաստատեալ ամեն օրէնքը՝ և հնա-
զանդի նոյն օրինաց: Ներկայ յայտարարու-
թեամբս բացատրելով զմեր դիրքը առաջի
քահանայապետական կոնդակին որ ի 5 փետր-
վարի 1875, և ձանաչելով՝ առանց պայմանի,
զերաւունքն՝ զոր տէրութիւնն ունէր հաստա-
տելու զեկեղեցական օրէնքն, և իրաւունք ու-
նի ի գործ դնելու զայնոսիկ սահմանադրապէս,
կը հրաւիրեմք զամեն կաթողիկոս հայրենասէրները
որք իւրեւ զմեզ կը խորհին, մասնակից լինել մեր
բողոքագրոյն վասն ապացուցանելոյ թէ ամե-
նեւին համամիտ չեն այն կաթողիկոսաց, որք հա-
ւանութիւն կուտան պապական կառավարու-
թեան յախառնութեանց ի վերայ կառավա-
րական իշխանութեան»:

«Պէրլին, 27 փետրվար 1875»:

Դադլիոյ հասարակապետական կառավարու-
թեան պաշտօնէից խորհուրդն՝ զինի բազում

դժուարութեանց, վերջապէս կազմուեցաւ մե-
սիւ Պիւֆէի նախագահութեամբ, որ ստանձնեց
զպաշտօն ներքին գործոց. մօսիւ Տիւֆօր՝ ար-
դարութեան, Մ. Սէյ՝ եկամտից, Մ. Տէքալ՝
արտաքին գործոց, Մ. Սիսէյ՝ պատերազմի պաշ-
տօնեայ անուանեցաւ:

Փետրվարի 16—28էն սկսեալ՝ հասարակապե-
տական իշխանութեանց կարգաւորութեան վե-
րաբերեալ օրէնքը, նմանապէս ձեռակոտին
կարգաւորութեան օրէնքն հրատարակուեցան.
ըսել է թէ յիշեալ ամսաթուէն սկսեալ նոր
Սահմանադրութիւնն ի գործ կը դրուի, որով
Դադլիոյ հասարակապետական օրինակոր կա-
ռավարութեան ներքեւ մտած կը համարուի:
Տար Աստուած որ տեղական լինէր վարչական
այս դրութիւնը: Կը հաւատեն թէ Բրուսիոյ,
Անգլիոյ և Աւստրոհունգարիոյ կառավարու-
թիւնքն իրենց ինքնակցութիւնը յայտնեցին
Դադլիոյ հասարակապետութեան նախագահին,
այս երկրին սահմանադրական ինքզրոյց յաջող
լուծմանը համար:

Վէնայցէն պաշտօնական կերպիւ կը ծանուցա-
նեն թէ Աւստրոհունգարիոյ կայսեր և Իտալիոյ
թագաւորին մէջ ի վաղուց առաջարկեալ տե-
սակցութիւնն՝ վերջապէս զինի Զատիկին տեղի
պիտի ունենայ ի վէնետիկ:

Մեծ վեհապետաց բարեկամական տեսակցու-
թիւնն ըստ մեծի մասին բարի հետեւութիւն մի
կունենայ ժողովրդոց բարօրութեան և ընդ-
հանուր խաղաղութեան յարատեւութեանը հա-
մար. ուստի բերկրաւ ի կը համարուի այս վե-
հապետական տեսակցութիւնը:

Սպանիոյ տխուր վիճակը կը շարունակէ. և
թագաւորական դաւուրն վերանորոգութիւնն
առայժմ օգուտ մի չըբաւ համազգային պատե-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԾԱՂԱՔԱՐԱՆ

Իշխակատար Էմմազգոյնքին սրբազան Հայրապետի
Ներսիսի Ե. վեհափառ եւ ազգասէր կաթողի-
կոսի ամենայն Հայոց:

(Շարունակութիւն: Տես թիւ 1008)

Յոյնէմ որ դեռ ևս Ղուկասու կենդանու-
թեան ժամանակն էր իւր մտաց մէջ կաթողիկոս,
երբոր այս անակնկալ լուրն ընկաւաւ Ներսէս
վարդապետի նամակէն, և աչն նամակին մէջ
նշմարեց Ներսիսի խորագիրութեան հետ նորա
քաղաքավարութիւնն, ոչ թէ միայն ըստ իւր
վեհանքն բարուց ի սրտէ ներքեց նորա այսքան-
ամենայ հակառակութեան, այլ և իսկոյն կոչեց
առ ինքն զեպիւրեմ արքեպիսկոպոսն, առեց նո-
րան ընթեռնուլ այն Ներսիսի դրած նամակն,
Հոգւոց ասաց Ղուկաս կաթողիկոսի համար, և
երդմամբ խոստացաւ թողուլ Ներսիսի ձեռին
իշխանին ամենայն գործերն, որպէս էին յա-
ւաւրս Ղուկասու. զինի որոյ տարածած զանգակ
հրամայեց հնչել տալ. դնաց յեկեղեցի՝ ուր ժո-
ղովեալ էին արդէն ամենայն հոգեւորականք և
անթիւ աշխարհականք, հրամայեց տալ յեպիւրեմ
արքեպիսկոպոսին իւր պատուական շուրջառնե-
րէն մին, և Հոգեհոգիստ կատարել ի յիշա-
տակ հանդուցեալ կաթողիկոսի, մինչ ինքն
մնաց կանգնած ի մէջ ժողովրդեան հանդոյն
սգաւորի:

Ձին հանգստեան Աւետարանի Աստուած ա-

նեղի երգէն առաջ երեսն դարձոյց առ ժողո-
վուրդն, և ծանուցմամբ իմաց տուեց Հայրա-
պետի մահն և իւր ընտրութիւնն, և անդ յանձ-
նեց իւր առաջնորդութիւնը եպիւրեմ արքեպիս-
կոպոսի ժամանակաւոր հովուութեան, խոստա-
նալով ընդ հասանին յիշմիածին, ձեռնադրել
զպիւրեմ իւր Գրիգոր վարդապետն՝ եպիսկոպոս
և առաքել յԱստուրասան յառաջնորդութիւն
Հայոցն Ռուսաստանեայց, իսկ զեպիւրեմ կոչել
յիշմիածին և առաքել զնա ծայրագոյն նուի-
րակ և Պատրիարք կոչմամբ ի կոստանդնուպոլիս,
Անդ հրամայեց և Թագէտս վարդապետին Մա-
րութեան ժողովել զամենայն կաղմած տպարա-
նին, և զհետ իւր բերել յիշմիածին, ուր հան-
դերձեալ էր հրաւիրել և զայնոսիկ զորս հրա-
ւիրեալ էր և տակաւին չէին եկեալ: Ձին ծա-
նուցմանն յորժամ երգեցաւ Աստուած անեղի
երգն, զվերջինն ինքն իւր հրեշտակային ձա-
նիւ սկսաւ, Որ աղբիւրք ես ծարաւեաց և հան-
դիստ աշխատեցոյ, ձանադարհ մտրելոյց և այն-
ինքն կականալիւ արտասուեաց և յարտասուս
բռնադատեաց զամենեւին: Բայց երեւի թէ
Յովսէփ արքեպիսկոպոսն միայն Ներսէս վարդա-
պետի նամակաւ կաթողիկոսացեալն երբ ասաց
զայս ամենայն, դիտեմ՝ զինչ արարեց, քակե-
ցից զտեսմարանս և մեծամեծս շինեցից, չսաց
ընդ նմին և զայս թէ եթէ Աստուած յաջողե-
ցէ: Ղուկաս կաթողիկոսի մարմինն թաղուեցաւ
Գալիանեաց վանքն. և միաբանք սկսան կաթո-
ղիկոս ընտրել: Դաւթի կողմն զօրացաւ, և Դա-
նիէլ ընտրուեցաւ. և ինչպէս խոստացեալ էր
Ներսէս վարդապետն Դաւթ արքեպիսկոպոսն
գնաց միաբանից բազմակնիւ կոնդակաւ դէպ

ի Պոլիս հրաւիրակ առ Դանիէլ Պատրիարքն յա-
թոռ Հայրապետական:

Ներսէս վարդապետն ձեռամբ միւս մասին
որ էին Յովսէփեան, իմացում տուեց Յովսէփ
արքեպիսկոպոսին՝ միաբանից երկպառակու-
թիւնն, և Դաւթի հրաւիրակ երթալն առ Դա-
նիէլ: Յովսէփ դիմեց տէրութեան օգնութեանն
և ոչ թէ միայն իւր Հայրապետական ընտրու-
թեան հաստատութիւն ընկաւաւ, այլ և այնպէս
անօրէնութիւն եղև, որ ամենայն խոչ և խռթ
ի բաց մերժի յերեսաց Յովսէփայ թէ ի Ռու-
սաստան, և թէ այլուր: Վասնորոյ երբ հասաւ
Դաւթի ի Կ. Պոլիս, ուր արդէն Մանուէլ վար-
դապետն զբազումս պատրաստեալ էր ի կողմն
Դանիէլի, և միայն Գալուստ եպիսկոպոսն չէր
հաւան ընդ այն, մատոյց զթուղթ հրաւիրանաց
միաբանութեանն, և գտեալ զՄանուէլ վար-
դապետն՝ սկսան ի միասին յորդորել զԴանիէլ
թողուլ զպատրիարքութիւնն Կ. Պոլսոյ և եր-
թալ յիշմիածին նստիլ յաթոռ Լուսաւորի:

Բայց քանզի ի նմին իսկ ժամանակի Մանուէլ
վարդապետն ի նամակաց Ներսէս վարդապետին
իմացաւ, որ և մի մասն միաբանից իշխանն
Յովսէփի կողմն է, և ընտրութիւնն յօգուտ նո-
րա է արել, և թէ ինքն Յովսէփ ևս հետամուտ
է Հայրապետական գաւազանի, ծանոյց և Դա-
նիէլին և Դաւթին և Դանիէլի կուսակցաց:
Դանիէլի կուսակցիցք՝ որք ի սրտէ սէր էին տուել
Դանիէլին իւր հեղահոգի բարուց աղաղաւ, չկա-
մեղով որ Դանիէլ ի վեհ մասն ընդ Յովսէփայ և
աղբամիջեան կուի բորբոքէ, խորհուրդ տուին
նորան հրաժարիլ ի կաթողիկոսական ընտրու-
թեանց, ցոյց տալով որ լաւ է նմա Պոլսոյ Պատու-

լազմին . որ քանի մի տարիէ 'ի վեր 'ի կորուստ
կրտանի այս գեղեցիկ երկիրը :

Մատրիաէն հասած վերջին մասնաւոր նամակ-
ներն յաջող լուր մի կուտան . այսինքն կը հա-
ւատեն թէ անյաողաբարեկամական համաձայ-
նութիւն մի տեղի ունենալու վերայ է 'ի մէջ
Տօն կարողութիւն և Արփոնս թագաւորին :

Աթշինէն (Սուլթան) փետրվարի 13էն (ըստ
Քրանկայ) հասած հեռագիր մի կը ծանուցանէ
թէ Հոլանտական զօրքն քանի մը մասնաւոր
յաղթութիւններ տարեր են ու երեք ամիսաց
տիրեր են Լամարա կոչուած տեղը :

ԱԶԳԱՅԻՆ

Արշալոյ նախընթաց թուով՝ Զմիւռնոյ ազ-
գային կրօնական և քաղաքական կրկին ժողո-
վոց վերակազմութեան նկատմամբ կեդրոնական
ազգային վարչութեան բրած որոշումն յառաջ
բերելով յաւելցուցած էինք թէ՛ «կըքսեմք թէ
'ի Պատրիարքարանէ՛ յուղարկեալ հրահանգին
համեմատ , դալ շարժու 'ի դործ պիտի դրուի
յիշեալ ժողովոց վերակազմութիւնն» :

Մեր լրածն տեղի չունեցաւ . քանզի տարիէ
մը աւելի ժամանակաւ լուծեալ երեսփոխանա-
կան ժողովոյն անդամքն մտածելով թէ օրինա-
ւոր ձեռնհասութիւն չունին զյիշեալ ժողովնե-
րն կազմելու , հարկ համարեցան իրենց իրա-
ւացի դիտողութիւններն ազերսագրով մի խո-
նարհարար յայտնել և Պօլսոյ ազգային կեդրո-
պառականի վարչութեան , և երեսփոխանական
նոր՝ ժողովոց մը կազմութիւնն հայցել :

Մեր կարծեմք թէ Զմիւռնոյ երեսփոխանա-
կան ժողովոյն սահմանադրապէս կազմութիւնն՝
որ անհրաժեշտ և ստիպողական է , չափէն աւելի
ուշացաւ . քանզի ինչպէս ամեն մարդ գիտէ ,
ազգային կարեւոր և դժուար խնդիրներ կան
որոշուելու , զոր անվաւեր և առժամանակեայ
կերպիւ կազմուելու քաղաքական ժողովն պիտի
չյաջողի կարգադրելու , որովհետեւ իւր ձեռնա-
հասութեան վեր են :

Ահաւասիկ պատճենն ազերսագրոյն , յուղար-
կելոյ 'ի և Պօլսոյ 'ի շէրորդու մի ամսոյն վերջա-
ցելոյ , և որ մեր ազգային դաւառական լուծ-
եալ երեսփոխանական ժողովոյն մեծագոյն մա-
սին ստորագրութիւնք կը կրէ :

Ընտրութիւնն հանգստեամբ վայելել , քանթէ
էջմիածնի Հայրապետութեան համար ի կազ և
ի կռիւ համակիւ . և աղաչէ որ Դանիէլ իւր փո-
խանորդ ընտրէ ի կաթողիկոսութիւն զմի սնն
յարժանաւոր եպիսկոպոսաց , և երբ հաճեցու-
ցին զԴանիէլ , ընտրութիւնն անկաւ ի վերայ
Բարդուղիմէոս եպիսկոպոսի : Այլ Դաւիթ հոգ-
ւով չափ զինեցաւ ընդդէմ այս խորհրդոյ : Տե-
սաւ Մանուէլ վարդապետն՝ որ Դաւիթ ջանքն
միայն այն է , որ Դանիէլի ձեռքէն յափշտակէ
Պատրիարքութիւնն , վասնորոց զգուշացոյց Դա-
նիէլին , որ Դաւիթ ծուղակն չընկնի :

Դաւիթ հասկացաւ որ Մանուէլ վարդապետն
պիտի չներէ նորան՝ Դանիէլին սխալեցնել , մէկ
այլ հնար ձեռքն առաւ : Կոստանդնուպոլսեցի
Յօհաննէս եպիսկոպոսին հարեանցի հասկացոյց՝
որ եթէ նա կամենայ՝ կարող է ստանալ որպէս
Պօլսոյ Պատրիարքութիւնն , նոյնպէս և էջմիած-
նի Հայրապետութիւնն : Յօհաննէս եպիսկոպոսն
խօսեցաւ այն իսկ մտօք Գալուստ եպիսկոպոսի
հետ . և Գալուստ եպիսկոպոսն հրապարակաւ
անդոնեց Բարդուղիմէոսի կաթողիկոս ընտրվին
և ընտրողներն նշովեալ կոչեց : Այս Գալուստ
եպիսկոպոսի գործն սկիզբն եղև ժողովրդեան
մէջ խռովութեան ծագման :

Դանիէլ Պատրիարքն ըսելով Գալուստ եպիս-
կոպոսին գործն և ժողովրդեան խռովութիւնն
Դաւիթ արքեպիսկոպոսի բերնէն չկամեցաւ այլ
ևս ըսել Մանուէլ վարդապետին , այլ ժողով-
եալ զժողովուրդն յեկեղեցի , ետ ընթեռնուլ
յուշակ նոցա էջմիածնի միաբանից հրաւերն .
Ժողովուրդն հաստատեց էջմիածնի միաբանու-
թեան ընտրութիւնն , և Դաւիթ յայն կացեալ

Սահմանադրութեան ճէրմերէն սրբազան արքե-
պիսկոպոս Բարեխոսա՛մ Պատրիարք Հայոց Պօլսոյ :

Ձեր Սրբազնութիւնը ամսոյս 10 թուով առ-
արժաւ աէր Գէորգ քահանայն զիւր ուղղած է՝
տալով նմա հրահանգ դաւառիւ ընդհանուր ժո-
ղովց միջոցաւ կրօնական և քաղաքական նոր
ժողովներ ընտրել : Թէպէտ յիշեալ արժաւ քա-
հանայն Ձեր բարձր հրամանը փութացաւ դուր-
ծալքել , սակայն ներքի ըլլալ մեզ խոնարհա-
բար մեր դիտողութիւնը հաղորդել Ձեր բարձր
Սրբազնութեան թէ՛ դաւառիւ ընդհանուր ժո-
ղովց լոյսը անգամները՝ տարիէ մը աւելի է ,
հրաժարականի մտած և կեդրոնական վար-
չութեան ընդունուած է : Վասնորոց յիշեալ արժ-
քահանայն արուած հրահանգը տեղի չի կրնալ
ունենալ երբեք գործադրելու . և ոչ իսկ ար-
դիւնք ունենալու : Եւ ըստ այսմ , ստորագրու-
եալքս՝ որք դաւառիւ երեսփոխաքն էինք եր-
բեմն , այլ այժմ սոսկ ազգային անհատք , կը-
փութամք Ձեր բարձր ուշադրութիւնը հրաւի-
րել . և կաղաչեմք որ բարեհաճիք յիշեալ հրա-
հանգը անգործադրելի լինելը գիտնալով՝ ըն-
դունէլ մեր խնամոհ առաջարկութիւնը , զոր և
սահմանադրական օրինաց անթերի գործադրու-
թեան համաձայն գտնելով , անկող էտ կը պա-
սեմք որ հաճիք ուրիշ նոր և օրինաւոր հրա-
հանգ տալ . և Ձեր բարձր Սրբազնութեան կող-
մէ աստ փոխանորդ մի նշանակել քաղաքիս
կրօնական դասէն նոյն արժաւ աէր Գէորգ քա-
հանայն , կամ ուրիշ Ձեր ուղած քահանայի մը
նախադասութեամբ վերակազմել տալ դա-
ւառիւ համար նոր ընդհանուր ժողով , որուն
ընտրական գործողութիւնք արդէն իսկ ի պատ-
րաստի լինելով , երբեք գժուարութիւն մի չե-
րի իւր նոր ընդհանուր ժողովը կազմութեան մա-
սին , այլ խիստ գիւրտութեամբ և մեծաւ սիրով
գործադրուելով , արդիւնքն կը տեղեկագրուի
Ձերդ Սրբազնութեան 'ի վաւերացումն :

Ռատի խնդրեմք , սրբազան Հայր , մեր սոյն
կարեւոր խնդրոյն ուշադրութիւն մատուցանե-
լով , բարեհաճիք ժամ յառաջ զարժանն անօրի-
նել , որով Ձեր Հոյրոտեան խնամովք դաւառիւ
խաղաղութիւնը վերահաստատուի :

Մնամք Ձեր բարձր Սրբազնութեան
ամենախոնարհ ծառայք :

Զմիւռնիս , 28 փետրվար 1875

Ազգային տրոց օրինաւոր կարգադրութիւնն՝
ազգային բարեկարգ վարչութեան հիմն լինե-
լով , և Պօլսոյ Պատրիարքարանն ի վաղուց անտի
այս կարեւոր խնդրոյն վրայօք կանոնադրութիւն
մի հաստատելու հոգ կը տանէր : Յանցեալ մն
կեդրոնական քաղաքական ժողովն յիշեալ տրոց

ընթերցաւ եկեղեցւոյ աղօթքն , իր ընտրեցեր
և ընկալար վերանելի և վերջանիկ Հայրապետ
Դանիէլ Պրիստոս Աստուած մեր , և այլն , և ա-
ռաջինն ինքն անկեալ ի ծունկս՝ համարեաց
չտան նորա , և Դանիէլ իսկոյն ագոյց Դաւիթի
զմատանին պատրիարքութեան և բաղմեցոյց
յաթոս Պատրիարքական :

Անագան ուրեմն հասկացաւ Դանիէլ որ Մա-
նուէլ վարդապետն չլսելով և Դաւիթին ունկն
մատուցանելով բաղում շարեաց դուռն է բա-
ցել . և գեռ չէր կարողացել դարման ինչ մտա-
ծել , որ ահա փորձութիւնքն կայծակի նման
հասան նորան :

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

Միմիայն անխոհմ ընթացք Գալուստ և Դա-
ւիթ արքեպիսկոպոսաց տուեց նեճեան մական-
ուանեալ Յօհաննէս արքեպիսկոպոսի ձեռն զէն ,
որով յաջողեց հակառակ իւր եպիսկոպոսական
ստորիմանի և ի նախատինս անտան իւրոց՝ Դա-
նիէլ անմեղ ի կաթողիկոսութիւն ընտրած անձն
Գալուստ խռովացող արքեպիսկոպոսի հետ միա-
սին յաքարս առաքել ի Տենեդոս կղզին և ի
կիպրոս , ուր չորս ամիս մնալոյն զինի՝ ունելով
ինքեան բանաակից զՄանուէլ վարդապետն ,
Դանիէլ առաքեց յառաջնորդութիւն Եւդո-
կիոյ , և Դաւիթ դարձաւ յէջմիածնի պատառել
ազգին :

Ներսէս վարդապետն անգագար լուր կը տա-
նայր Եփրեմ՝ արքեպիսկոպոսի նամակօք՝ Ռու-
սաստանէն , և Մանուէլ վարդապետի գրու-
թեամբք Պօլսէն , Տենեդոսէն և Եւդոկիոյէն ,
և զիտէր , և միշտ որպէս ինքեան կամ էր ի-
մացում կուտայր միաբանութեան , թէ Յովսէփ

վերաբերեալ ծրագիր մի ներկայացոյց երեսփո-
խանական ժողովոյն և զոր աղագային թերթի
փութացին 'ի լոյս ընծայել :

Ի տեղեկութիւն մեր ընթերցողոց արժան
կը համարիմք մեք ևս հրատարակել զնոյն ծրա-
գիրն՝ որ հետեւեալն է , յաջողութիւն բարե-
մաղթելով նորա գործադրութեան և յիշեցնե-
լով ամենուն թէ ազգային տուրքը՝ նուիրական
պարտք մըն է իւրաքանչիւր հայու համար :

ԾՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՏՐՈՑ

Ռադակի տրոց վերաբերեալ կոնցնագրութիւն :

1. Ամեն ազգային անհատ՝ որ չափահաս է և
վաստակի ու շահու տէր և իւր բնակութիւնը
կ. Պօլսո հաստատած , սրարտական է կեդրոնա-
կան անուակին տարեկան տուրք մը տալու :

2. Այս տուրքը ութ աստիճանի բաժնուած է
այսինքն Ա. 300, Բ. 250, Գ. 200, Դ. 150, Ե. 100,
Զ. 75, Է. 50, Ը. 25 :

3. Առ նուազն 75 դուրուշ տարեկան տուրք
վճարողն ըստ Սահմանադրութեան երեսփոխա-
նական ընտրող և ընտրելի կրնայ ըլլալու :

4. Թաղական խորհուրդները պիտի հրաւիրեն
ի խորհրդարան իրենց թաղին մէջ բնակութիւն
հաստատող և տուրք տալու կարողութիւն ու-
նեցող ազգայինները , և հետեւեալն համահաճու-
թեամբ պիտի որոշեն տալու սո բքին որքանու-
թիւնը , զորն որ պիտի հաստատէ նոյն ազգայի-
նը իւր ստորագրութեամբ յատուկ տետրակի
մը մէջ :

5. Տրոց վճարումը գիւրացելու համար տա-
րեկաւ երկու վեցամեայ բաժնիներու բաժ-
նուած է , և տարեկանը մէկ անգամէ չկրցող
վճարողներն երկու վճարումը պիտի հատուցա-
նեն , վեց ամիս անգամ մը վեցամեայ բաժնի
նին վճարելով կանխիկ :

6. Քաղաքական գործոյ մը համար Պատրիար-
քարան կամ Թաղ . խորհուրդներուն գիմոյ ազ-
գայինէ մը պայմանաժամէն երեք ամիս ետք
գեռ անվճարելի ձգուած ու զիջուած տուր-
քերն առնուելէն ի զատ՝ նաև տրոց վրայ 10
առ 0/0 իւր տուգանք պահանջուելէ ու առ-
նուելէ ետք նոյն անձին գործը պիտի տեսնուի :

7. Տուրքին տրուած ըլլալը պիտի հաստատուի
վճարողին քովը գտնուած ընկալագրէն , որ ասո-
րագրեալ պիտի ըլլայ հաւաքիչէն , կեդրոնա-
կան անուակին գանձապահէն և Պատրիարքար-
նի կնքով վաւերացեալ :

Ինչ խորհրդոյ վերայ է , ինչ յաջողութիւնն
է ձեռքն անցուցել , և ինչ ձանապարհորդա-
թեան հանդերձանք է պատրաստել , կամ Դա-
նիէլ Եւդոկիոյ ինչ գործով է պատաղեալ , և
նր և երբ կարեն զմիմիանս տեսանել : Մին
պատրաստուեցաւ Յովսէփ երթալ յէջմիածն ,
արդէն Ռուսաց դեսպանն Նախարար յաջողի
էր Օսմանեան Դուռէն հանել նորա համար հա-
տատութեան հրովարտակ , թէ Հայոց ազգի բա-
ցարձակ հաճութիւնն և ընտրութիւնն չէր ա-
պահովել , վասնորոց և Յովսէփ առկաւին ժամա-
նակ և պատեհութիւն ունէր իւր վիճակի հայա-
բնակ քաղաքաց սցեղութիւն առնել , և իւր
այնքանամեայ ժողովրդեան տալ հրաժարական
ողջոյն և իւր վերջին օրհնութեան հետ աւան-
դել իւր հայրական Երատն , որ միշտ յայս մը
բան կը վերջանար , թէ յայսմհետէ զգոյշ կա-
ցէք ձեր Առաջնորդներէն , որովհետեւ նոցա
մէջէն յոյժ սակաւք կը լինին Յովսէփ . ձեր եկե-
ղեցեաց արդիւնքն ձեր ձեռքն պահեցէք՝ որ
ձեր նեղութեան ժամանակն ձեզ պիտոյանայ ,
մատուանդ ջանք դրէք՝ որ այն արդիւնքն ազ-
գի մանկանց կը փութան համար ի դործ դը-
ռին : Թէպէտ ևս ևս ստացել եմ՝ ձեզմէն շատ
արդիւնք , բայց ես աւելի շատ արդիւնք եմ
ձեզ համար ապահովել . դեռ մի տարի հաղի է
լրացել , որ այս վիճակի ամենայն հայաբնակ քա-
ղաքը ստացան արտօնութեանց պարզեալով .
կը լինեն այնպիսի Առաջնորդներ , որ ոչ միայն
ձեր արդիւնքն տարապարտ կառնուն , այլեւ
այն ձեր արտօնութեանց դարմանակալ կը լինին :

Վերջապէս համբաւ հասաւ Ներսէս վարդա-
պետին որ Յովսէփ յուզի անկաւ Աստուախանէն

8. Մէկին իր տուրքը ստորագրելէն ետքը նոյն տարւոյն տուրքին մէկ մասը կամանդովք անվճար մնալով ելծէ վախճանի, այդ պարտքը ընտանիքը կամ ժառանգորդը պիտի վճարէ :

9. Ամեն թաղ. խորհուրդը պարտաւորեալ է ամեն տարի ցուցակով մը հաղորդել կեդրո. վարչութեան իւր թաղը նոր եկողները և ուրկէ գալիքներն, գացողները և ուր երթալիս, նոր շահու տէր եղողները, իրենց ստորագրելիս փութութիւն ուզողները և վախճանողները :

10. Տուրքը վարչութեան կողմէ ընտրեալ թաղ հանուր հաւաքիչներու ձեռք պիտի հաւաքուի, հաւաքեալ գումարին վրայ Յէն մինչև 10 առ 0/0 հաւաքչաց պիտի արուի իբր ծախք վարձատրութիւն :

11. Ամեն գաւառաբնակ Հայ՝ որ չարհապաս է և վատակի և չհաւ տէր՝ պարտաւորեալ է իր բնակած գաւառին աղբային գաւառական սրնտակին տարեկան տուրք մը տալ :

12. Այս տուրքը եթէ անտեղեկութեամբ է. Ա. 150, Բ. 100, Գ. 75, Դ. 50, Ե. 25, Զ. 12, Է. 6 :

13. Չորրորդ յօդուածին համեմատ ինչպէս Պոլսոյ թաղերը՝ նոյնպէս և գաւառները թաղա. խորհուրդը պիտի հրաւիրեն ի խորհրդարան իրենց թաղին մէջ բնակութիւն հաստատող և տուրք տալու կարողութիւն ունեցող աղբայինները և հետեւին համահաճութեամբ պիտի որոշեն տալու տուրքին որքանութիւնը, զորն որ պիտի հաստատէ նոյն աղբայինը իւր ստորագրութեամբ յատուկ տետրակի մը մէջ :

14. Տուրք վճարողաց ընդհանուր ցանկը ինչպէս ի Կ. Պոլսի թաղական խորհուրդը՝ նոյնպէս ալ գաւառաց մէջ թաղական և գիւղական խորհուրդը կը յիշեն և վաւերացեալ մէկ օրինակը գաւառական վարչութեան կըրդիւն, և գաւառական վարչութիւնն ալ կեդրո. վարչութեան :

15. Հաւաքման եղանակն ամեն մէկ գաւառ իրեն յարմար եղած եղանակաւ կը տնօրինէ :

16. Ձանազան տեղեր պահպանող գաւառացիներն անոնք բնակութիւն հաստատած տեղի անտեղի կը վճարէ իւր տարեկան տուրքը :

17. Գաւառական այս տուրքն 1875 Մայիս 1էն պիտի սկսի գործադրութեան :

30 Յունիս 1875 :
Դիւան աղբային վարչութեան
Քաղաքական Ժողովոյ :
Ատենադպիր , վասն Ա. Կենտրոնի ,
Ս. Մամիկոնեան : Յ. Գ. Կոստանդ :

Էդպ յիշմիածին, իսկ իւր ծանրութիւնն՝ յորում կային Ղրիմու երկրի հաղորդ և մի եկեղեցեաց բաններն, հրամայեց Գրիգոր վարդապետին բերել զկնի իւր և տղարանն և իւր գրադարանն յանձնեց թաղէս վարդապետին, որ յառաջիկայ գարնանն հաստցունէ յիշմիածին : Ներսէս վարդապետն սկսաւ յաճախել իւր նախնիներն առ Յովսէփ, որ ընտրեալ ի Հայրապետութիւն աղբի՝ որքան կը մերձենայր ի Տփլիս, այնքան ստեպ ընդ առաջ կ'երանէին նմա Ներսիսի ուղեորած սուրհանդակներն հանդերձ նամակօք, և իսկոյն կը վերադառնային կոնդալօք յանուն Ներսէս վարդապետի, որով կըրկնապատիկ աւերացաւ նորա զօրութիւնն իշմիածին մէջ բոլոր միաբանութեան վերայ :

Յովսէփ մնաւ ի Տփլիս մեծաւ փառօք՝ որպէս երբեմն Յիսուս յերուսաղէմ Ծաղկազարդի օրն բայց ինչպէս երուսաղէմ եղև Յիսուսին, նոյնպէս և Տփլիս եղև Յովսէփայ կենաց դէմ յայդ դարանակալութեան :

Բազում անգամ լսել եմ Ներսէս արքեպիսկոպոսի բերնէն Քիչնէվ քաղաքի մէջ, և Ներսէս կաթողիկոսի բերնէն Տփլիս քաղաքի մէջ, թէ եթէ սրբազանն Յովսէփ հասանէր ողջամբ յիշմիածին և նստէր Հայրապետական գահն, մեծ կասկած պիտի յղանայի երկնից արդարաւատ հատուցման դէմ՝ որովհետեւ և այսքան տարի ապստամբ էր մնացած սուրբ Ամբուսէն, և ոգորում էր և մաքառում էր ամենայն զօրութեամբ նորա անժխտելի իրաւանց դէմ, և ոտնակոխ էր անում նորա Հայրապետի պատիւն որ անհաւատից անգամ էր պատկառելի :

— Հնդկաստանի ճաւա կղզոյն Մամարանանդ քաղաքին բնակիչ աղբատէր երիտասարդ բաւրեկամէ մի՝ Յունուարի 29 ամսութեան, նամակ մի բնկալաք. որոյ մէջէն հետեւեալ քաղաքեական և հետաքրքրական տողերն քաղելով՝ արժան կը համարիմք հրատարակել, ապացուցանելոյ համար թէ Արարածն Արշալոյս հաղորդակցութեան միակ կապն է ի մէջ Հայոց ի միմեանց շատ հեռի բնակելոց :

«Արշալոյս ձեռ շարունակաբար հասանէ առ իս և հաճութեամբ սրտի ընթերցումը այն, մանաւանդ զաղբայինս և զբանասիրականս : Յարաւանութեան նորին ցանկամ ի սրտէ :

«Ի 25 Յունիսի ամին անցելոյ ամուսնացոյ ընդ հայկազուն օրիորդ . . . և առաքելի առ ձեզ զստմանկ հրաւիրանաց ի հարսանիս : Յունամ թէ ստացեալ իցէք զայն» :

— ՄԱՍԻՍԻՆ անցեալ ամսոյ 18 թուոյն մէջ հաճութեամբ սրտի ընթերցաք գլխաղայ աղբօգ ուտ տնօրէնութիւնն, զոր ամենայն Հայոց վեհա. կաթողիկոսն բարեհաճեր է ընելու յօդուած ընդհանուր աղբին :

«Տփլիսէ գրուած նամակէ մի կիմանանք թէ վեհա. կաթողիկոսն՝ Արքեպիսկոպոս Գարեթէլ արքեպիսկոպոսը Տփլիսի վեհակին Առաջնորդ և միանգամայն Ս. Էջմիածնոյ ճեմարանին տեսուչ ընտրեր և իւր այս ընտրութիւնը Ռուսոց վեհա. կայսեր հաւանութեան առաջարկեր է» :

— Դարձեալ ուրախ սրտի կիմանամք թէ վեհակալը Համամճեան Մարգիս Էֆէնտին Բ. Դրան արտաքին դոժոնց պաշտօնատան մէջ ընդհանուր խորհրդոյ քարտուղար կարգուեր է :

— Նմանապէս կըլսեմք թէ մեծարդոյ իսթիւճեան Ստեփան Էֆէնտին բարձրագոյն հրամանաւ, հասարակաց կրթութեան խորհրդոյն անդամ որոշուեր է :

— Հաճութեամբ սրտի կը ծանուցանեմք թէ Բարձրագոյն Դուռն հաճեցաւ Սանիէ Միլիթեմայիկի աստիճան չնորհել վեհակալ Սարգիս լլեան Յակոբ Էֆէնտին, որ քաղաքիս մեծանուն երեւելաց մին է :

— Թիֆլիզի Մշակին հետեւեալ յօդուածն կը հաղորդեն ի փարիզէ :

«Նորերս տեղոյս քահանայի որդին Պ. Լ. Լան Հինքեարպէյնտէն հասաւ փարիզ Յրանայի Լաւօշ քաղաքից, ուր յաջողութեամբ աւարտել է իր ուսման ընթացքը, երկրագործութիւն, և մեծագիր է գնալ Պոլս : Թող մեր ազգը հաս-

Ներսէս վարդապետն՝ Դուկաս կաթողիկոսի գերեզմանի վերայ նստած Գայիանեանց վանքի մէջ, արդեօք ինչ մտածման մէջ էր, մինչեւ մի Էջմիածնի միաբանից՝ իւր իսկ Ներսիսի դուքամբը՝ հրաւիրանաց բաղնիստորագիր նամակն ծոցն դրած, աղբի տաններորդ մասին ընտրութիւնն ստացած, և Ռուսաց կայսերական հաստատութիւնն ձեռքն առած Յորդանան գետի նման կուգար դարիւ և դարիւ : Յորդանան գետի նման, որոյ պարզ, յորդառատ և քաղցր ջրերը անհետ կը կորչին Մեռեալ ծովու աղի և դառն ջրերի մէջ : Արդեօք գէթ սակաւիկ իմն հաւատացեալ էր թէ Յովսէփ, որ իւր Ներսիսի ճարտարութեամբ ըստ երեւութին առանց խոչընդակութեան, իսկ ըստ իրին բաղնիստորակ խոչընդակութեամբ ստացել էր Հայրապետական ավտոն, զկնի բաղնիստայ հակառակութեան տեսանելով նորա Ներսէս վարդապետի մէջ կեղծուպտիւր դարձ և սկամոյ զղջումն, պիտի ունենայ այնպիսի դիւցազնական վեհանձնութիւն, որ ներէ նորա դարանակալութեանց Աւետարանական անյիշատարութեամբ, և ուղիղ սրտով իւր Գրիգոր վարդապետի հետ միասին ձեռնագրէ եպիսկոպոս, ինչպէս եփրեմ արքեպիսկոպոսի բերնում խոստացել էր, տայ վեհակ, և Դուկասու առջին այնքան ժամանակի աշխատութեանց դէմ վարձատրութիւն անէ, կամ արդեօք պիտի կատարուի նոցա մէջ այն առաջին, թէ՛ ուր մեծանիւրտ սեգ առիւծին, շատ է յերկիր հեղուլ զմարմին, իսկոյն վախճան լինի մարտին, երբ խնամարհ անդ թ շնամին :

(Շարունակեսցի) :

կանայ, որ իր փրկութիւնը ճշմարիտ երկրագործութեան մէջն է : Թող մեր կալուածատէրերը այդպիսի երիտասարդներին ծարուճանապարհ տալով առիթ տան բաղնիստեւու մեր մէջ այդ արհեստին հմուտ մշակներ, որ իրանց կալուածատէրերին էլ շատ օգտաւէտ կըլինին» :

— Թիֆլիզի Մեղու Հայաստանի լրագրոյն փետրվարի 1 թուոյն մէջ հետեւեալն կը լեռնումք : «Գաւրիկից մեզ հաղորդում են, որ Սպահանի Հայոց վեհակը շատ խեղճ դրութեան մէջ է, ուստի և կարօտ է առհասարակ իւրեանց օտարաբնակ եղբարց նպաստին, մանաւանդ Ռուսաստանի Հայերի : որոնք աւելի միջոց ունին օգնելու իւրեանց Պարսկաստանի եղբարց» :

— Յիշեալ լրագրէն կը տեղեկանամք թէ վերջին պաշտօնական վիճակագրութեան համեմատ Ալեքսանդրապոլ (Ռուսաստան) քաղաքին մէջ կը գտնուին 3526 տուն, յորոյ 3295ը՝ Հայոց տուն են : Նոյն քաղաքին բնակչաց թիւը՝ ընդամենը 19,982ի կը հասնի. յորոց 18,996ը Հայ են, և ասոնցմէ 9889 հոգին արու են և մնացեալն էգ : Ըսել է որ Ալեքսանդրապոլ քաղաքին 19,982 բնակչաց մէջ միայն 986 հոգին օտարազգի են, և կը բաժնուին հետեւեալ կերպիւ. 604 հոգի՝ Մահմետական, 367 հոգի՝ Գոյն և Ռուս, 22՝ Մալական և 3՝ Հրէայ :

Ծրագիր ազգային Փոխառութեան
ի Կոստանդնուպոլիս :

Յանցելումն մեծա. Բ. Լիմնեան Էֆէնտին աղբային վիճակահանական փոխառութեան ծրագիր մի հրատարակել տուած էր Պոլսոյ Հայ լրագրաց մէջ : Այս ծրագիրն զոր աղբօգուտ և ուշագրութեան արժանի կը համարիմք, հետեւեալ առաջարկութիւնը կը պարունակէ :

Աղբային փոխառութիւն մի հաստատել, բաղկացեալ 70,000 բաժնիներէ, իւրաքանչիւր բաժնի 40 ֆրանքի վերայ . յորմէ գոյացած դրամաւ լիով մուծօն կոչուած օսմանեան արժեթուղթ դնել և Օթոման Պանքան կամուսնի ևս ապահով տեղ մի աւանդ դնել և կայսերական կառավարութեանը վաւերացնել տալ այս փոխառութիւնը :

Յիշեալ մուծօններուն տարեկան տոկոսն տարին 20,000 ֆրանք աղբային Պատրիարքարանի ծախուց և 20,000 ֆրանք Ս. Փրկչեան հիւանդանոցին տալ, և տար տարուան միջոցի մը մէջ ամեն երեք ամիսը անգամ մի վիճակահանութիւն քաշուելով, փոխառութեան տոմսակներէն մէկ մէկ թիւ 10,000 ֆրանք, հնգական թիւ 1000ական ֆրանք, և 250 թիւ ալ 150ական ֆրանք շահ որոշել : Այս 10 տարուան միջոցը լրանալէ ետեւ, ամեն մարդոց տուած 40ական ֆրանքը իրենց վերադարձնելէ ետեւ, ազգին ալ երկու միլիոն ֆրանքի զուտ դրամաւ լիով պիտի մնայ :

Յիշեալ փոխառութեան առաջարկող արժանայարգ անձը, կը յուսելու թէ այս արդիւնքն ոչ թէ հաւանական հաշիւներով այլ թուաբանական ամենաճիշտ հաշուով ապացուցեալ է,

Աղբային փոխառութեան ուրիշ ծրագիր մըն ալ մեծա. Հ. Պաղպուլեան Էֆէնտինէն առաջարկեալ է : Այս ծրագիրն՝ առաջինին վերայ մեծ առաւելութիւն մի ունի, այն է եռամեայ շրջանի մը մէջ 64,000 օսմանեան լիւս շահ պիտի թողու աղբային կեդրոնական դրամարկիդ մինչեւ առաջինն տանտամեայ երկար միջոց մըն է, (թէ և 21—22 հազար լիւս աւելի շահ կըլցունէ) . քանզի միջոցին կարծութիւնն կընայ մեծապէս օգնել գործոյն յաջողութեանը :

Ահաւասիկ Մագպուլեան Էֆէնտինի ծրագիրն որոյ դիմաւոր պայմաններն հետեւեալն են :

Աղբային փոխառութեան դրամաւ լիւս մի ձեռք բերելու համար՝ անանուն 70,000 տուն շրջաբերութեան պատրաստել իւրաքանչիւրն 2 1/2 օսմանեան ոսկիի արժողութեամբ :

70,000 բաժնէտոմսներէն գոյանալի 175,000 օսկիի դումարելովն, փոխառակ «Մուծօն» առնելու, (որ թէ 10 տարուան միջոցի կարօտ է և թէ Հոստացուի որ Հրապարակի վերայ պետր

եղածին չափ դանուկ, 200,000 ոսկիի Պոն տը
թրեզորի՝ արժեթուղթ հարկ է առնել Ս մար-
քայով: որոյ տարեկան բերելիք չափն է 9 առ
0/0, վճարելի կառավարութեան գանձէն և որոյ
տեղում թեան յարդն 1878 Յուլիսի 1ին լրանայ:

200,000 ոսկիի Պոն տը թրեզորի արժեթուղթն
մինչև 1878 Յուլիս 1՝ այսինքն երեք ամաց մի-
ջոցին մէջ տուկոս կը բերէ 63,000 լիւռա: որոյ վե-
րայ բուն գումարադրութիւնը յաւելցնելով կընէ
263,000 անգղիական ոսկի, զորս տաճկական
ոսկիի վերածելով, կունենանք 289,300 օսման-
եան ոսկի: Բառնալով ասկէ 12 անգամ վիճա-
կահանութեան բաշխում լինելու 222,000 ոսկին
և 3300 ոսկի ալ կարգեալ գործադիր տեսու-
թեան և այլ զանազան ծախուց համար, կըմնայ
կեդրոնական ազգային գումարակէզ 64,000 ոսկի
զուտ չափ երեք ամաց կարճ միջոցին մէջ:

Եղանակ վիճակահանութեան:

Երեք տարւոյ չընանի մէջ 12 անգամ վիճա-
կահանութիւն կատարել՝ երեք ամիսը մի ան-
գամ, յառաջիկայ Նոյեմ. 1էն սկսեալ, և իւրա-
քանչիւր վիճակահանութեան միջոցին 1300 շա-
հոյ թուոց պարգև վճարել հետեւեալ կարգաւ:

Բաժին:	Պիտի շահ:	Գումար:
1	250 ոսկի	250
1	40 »	40
3	20 »	60
20	10 »	200
175	6 »	1050
1100	3 »	3300
1300		49 00

Կատարուելի 11 վիճակահանութիւնն այս ե-
ղանակաւ գործադրել, իսկ 12րդ կատարուելի
վիճակահանութեան մէջ երեքական ոսկի շահո-
ղաց թիւը յիշխանակ 1100ի պիտի ըլլայ 55,500,
որպէսզի այս մնացորդ թիւերը թէ իրենց բաժ-
նէքին տուած գումարակը ընդունին, և
թէ առնուազն իրենց տուած 2 1/2 ոսկիին տեղ
3 ոսկի ստանան, որով բնաւ (աւելի պարգև)
չշահող թիւն ալ 7 առ 0/0 տուկոս կըստանայ:

Առաջարկեալ այս փոխառութեանց մէջ մի
միայն դժուարութիւն կայ, զոր ամեն ընթեր-
ցող յայտնի կրտսնէ և որ ամենամեծ դժուար-
ութիւնն մին է...: Ուր դանուկ է 70,000
տոմսակաջ, գնողներ, այսինքն 175,000 ոսկի,
կամ 2,800,000 ֆրանք վճարողներ, մանաւանդ
այժմեան ազգային կացութեան մէջ. յորում
դժբաղդաբար միաբանութիւնն և եղբայրի-
ութիւնն չեն փայլի:

ՔԱՆԱՔԱՆ ԽԱՐԻԿՔ

Չմիւռնիս, 8 Մարտ:

Մեր վեճակ վայրն, որոյ արդարաւոր բնա-
ւորութիւնն և հասարակաց օգտին համար ու-
նեցած մարդասիրական յարատե ջանքն յայտ-
նի են ամենուն, անձամբ կընկէ միշտ քաղա-
քիս զանազան գատաստանարանաց բարեկար-
գութեանը, որպէսզի ամեն գատավիճակներն
արդարութեամբ և փութով տրուին:

Նորին վսեմութեան տնօրէնութեամբն որոշ-
ուեցաւ, որպէսզի կիրակի, երկուշաբթի և չո-
րեքշաբթի օրերն եղբունական գործոց քննու-
թեանն յատկացեալ լինին. և շաբաթ՝ երեք-
շաբթի ու հինգշաբթի օրերն քաղաքական գործ-
քերն նայուին: Այս գործոց աղերսագիրներն
թուահամարով պիտի նշանակուին և հետզհետէ
գատաստանական ատենին առջև պիտի բեր-
ուին: Իւրաքանչիւր գատարանի գումարը ցու-
ցակ մի պիտի կախուի, որոյ մէջ երեք օր յա-
ռաջ նշանակուած պիտի լինին տեսնուելու
գործքերն և նոցա թիւը:

Հաճութեամբ սրտի կրտսնեմք թէ քաղա-
քապետական խորհուրդը (միւնիստրալիթէ) որ
մեր վեճակ կուսակալին խնամքն վերանորո-
գեցաւ նոր և բանիւրուն անդամներով, ամեն
ջոնք ի գործ կըդնէ հարկաւոր եղած տնօրէ-
նութիւններն ընելու քաղաքիս օգտից և պայ-
ծառութեանը համար:

— Ի հինգ անգամից բաղկացեալ ընկերութիւն

մի յանցելում շարժութեւ աղերսագիր մի մա-
տուցին մեր վեճակ կուսակալին, յորմէ կընդ-
րեն զարտեմութիւնն մենավաճառութեան կու-
սակալ մնայ, զոր կընտանան 5 զուրուշի վա-
րել օխան. մինչդեռ այժմ 8էն մինչև 12 զու-
րուշի կըմտնուի ըստ տեսակին:

— Առտորիական նաւատորմիցը՝ բաղկացեալ ի
չորս մեծ շոգենաւուց և ընդ հրամանատարու-
թեամբ տը Սթէնիք ծովագետին, որ ի նաւա-
հանգիստ մեր կըգտնուէր յերկուց, շաբաթուց
հետէ, կիրակի առաւօտուն մեկնեցաւ:

— Իտալիոյ հիւպատոսարանը ամսոյ 2—14ին
սովորական հանդիսի կատարեց վիքթոր Էմմա-
նուէլ թագաւորին ծննդեան 30 տնակախմբութիւնը:

— Նմանապէս քաղաքիս Պարսից հիւպատոսա-
րանն երկուշաբթի օրն արժանաւայել հանդի-
սիւ կատարեց զտնակախմբութիւնն օգոս. Շահին:

— Աստուծոնդարից Լչոյի շոգենաւն, որ Ա-
սորեաց ծովեղբայրէն անցեալ ուրբաթ (Փետր-
վարի 28ին) կըսկսուէր, ամսոյ 4ին երեքշաբթի
օրն հասաւ, 5 օր ուշ մնալով ի պատճառս փո-
թորկայից օդոց. հետեւեալ փոխանակ անցեալ
շաբաթ օրն ի Կ. Պօլիս երթալու երեքշաբթի
երեկոյնն էրցաւ մեկնել աստի յիշեալ մայրա-
քաղաքն երթալու համար:

— Բարեկենդանին շաբաթ դիշերն (22 Փետր-
վար) փառաւոր հարկերոյ թէ և պարահանդէս մի
տեղի ունեցաւ վեճակաւոր Սարգիսեան Թա-
կօր էֆէնտիին տունն՝ ի պատիւ նահանգիս
ընդհանուր կառավարիչ վեճակ. Ահմէտ Բասիմ
փաշային: Նորին վսեմութիւնն որ յոյժ գոհ
եղև այս խնջոյքէն, կէսգիշերն երկու ժաման-
ցած մեկնեցաւ իւր ապարանքը վերադառնալու:

— Բարձրագոյն Գրան արտաքին գործոց պաշ-
տօնատան համարակալ խորտեան մեծա. Գրիգոր
էֆէնտիին՝ Փրկչի կարգին չքանչանք շնորհակեր
է ի թագաւորէն Հէլլապոլի:

— Կիմանամք թէ մեծա. Պ. Մ. Միանսարեանց
աղգասէր գրագէտն, ի մօտ ժամանակի պիտի
հրատարակէ ի վաղուց հետէ սկսեալ իւր պատ-
ուական երկասիրութիւնն, որ է ցուցակ մի հա-
յերէն բոլոր մատենից՝ աղագրութեան ի հնգեւոս-
սան դարէ մինչև յայտոր:

— Մարտի 1 թուոյն մէջ կըկարգամք.
«Իրաւի թէ Կ. Պօլսոյ քաղաքապետութիւնը»
մայրաքաղաքիս սղանդարաներուն մենավաճա-
ռը տարին 25,000 լիւռ վարձով ընկերութեան
մը տալու համար բանակցութեան մէջ է:

— Կըլսեմք թէ ազգային երկեքի սեղանաւոր
Մարտեան վեճակաւոր Օնեիկ պէյը, որ կաթողիկ
Հայոց Հասունեան կուսակցութեան կըվերաբե-
րի, Մէհմետի կարգին երրորդ աստիճանի չքա-
նչան ընդունել է:

— Կըհաւատեն թէ երեսուղէմի հունաց Պատ-
րիարք տէր Բրօքթիոս իւր աթոռէն ընկեր է
յիշեալ քաղաքին սինօգիս որոշմամբ:

— Թէ և ոստիկանութիւնն ամեն հնարաւոր
զգուշութիւններն ի գործ կըդնէ, բայց և այն-
պէս գողութեան դէպք անպակաս են:

— Լիբանանու կուսակալ Բիւսթէմ փաշան,
որ ի Կ. Պօլիս կըգտնուի, օգոստոս Սուլթանէն
Օսմանիէ կարգին առաջին աստիճանի չքանչա-
նաւ պատուեցաւ: Նորին վսեմութիւնն ամսոյ
6ին պիտի մեկնէր ի Լիբանան վերադառնալու:

ԱՌՆԻՏՐԱԿԱՆ

Բամաղիլը դիւրաւաճաւ է միշտ և այս շաբ-
թու դրեթէ 1800 հակ վաճառեցաւ 400—380
և 340 զուրուշի կենդինայն, ըստ տեսակին:

Աֆիօնը հանդարտութեան մէջ է և վաճա-
ռում մի չեղև ի 15 աւուրց հետէ ի պատճառս
չափազանց պահանջմանց վաճառողաց:

Փայամուտին մէկ շուր տեսակը վաճառեցաւ
170ի կենդինաւոր. իսկ հասարակ ապրանքը կար-
ժէ 155—163 զուրուշ ըստ տեսակին:

Ուշաւոր բուրդէն դրեթէ 200 կենդինաւոր Գա-
ռահիսարի ապրանք վաճառեցաւ 350 զուրուշի:
Ճէհրին դիւրաւաճաւ է և այս շաբթու մէկ
մաս առաջին տեսակէն ծախուեցաւ 71 3/4 զու-
րուշի օխան:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԴՐԱՏԱՏԱՐԱՐ

ՄԱՐԻ ՏԱՅԻՆԱՆ

Գրեաց Յ. Կ. Սըլմանեան:

40 երես բաղկացեալ բանաստեղծութիւն մի, փայ-
լուն բոյր վերայ մարդիկ տապալուած ի տապալու-
ճեմեան: Հեղինակը իւր գողարիկ և սրտաշարժ
գրիգոր ուրուագրած է ճարտարութեամբ, վաղան-
ոսիկ օրրորդին լեզուական սքանչելի դրախտը ընծա-
րից: Կըծախտի հատն 3 դրուշի ի տապալու ճե-
տեան և յընթերցատունն Հայոց՝ Զ. Բաքիեանի քով:

ՀԻՒԱՆԳԻՆ ԲԱՐԵԿԱՍԵ



ԳԵՂԱՆՏԻ ՀԱՆՈՒԹԻՒՆ

ԶԱՆՏԻՆ ՀԻՒԱՆԳԻՆՈՒԹԻՒՆ

Մարդոյ շնորհիւ գրութեան («Գեղ») շատ յոյժած ըլլալ
սոսկալի աստ մին է և զիջերուն ամենափոքրիկ շարժումը կամ զը-
գուցութիւնը վշտալի է յոյժ. Զանտի ուր գտնուէ անոր դե-
ղը: — Միայն գեղը այս է. քիչ խմ գինի, գարեջուր, և ոգի-
կից ըմպելիք. և աւելի աղէկ կըլլայ որ բոլորովին հեռանաւ
նոցմէ, և ամենին չլսան. նմանապէս խաչմէ մի խմբ, և ան-
տեղ թեթեւ թեթեւ (չա) գոհ եղբ: Կարելի եղածին շափ
քոր օր ծծէ ամեն գիշեր իմ դեղահատեմէ երեք կամ չորս հա-
կըմէ, շատ միս կեր և համեմունք (սոլա) հեռի կեցիք: Եթէ
այս օգտակար կանոնները ճշգրտութեամբ ի գործ դնելու ըլլա-
միտքը շուտով պիտի հանգստանայ, մարմնիդ առողջ պիտի ըլլայ և
պիտի մոռնաս թէ զիջա շարժումն ունեցար:

ԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆ ԵՐԿԱՍԵՆՑ

Այս գործարանաց վերաբերեալ ամեն հիւանդութեանց մէջ
թէ կողմնորդ չափէն աւելի ջրալից կըլլան կամ բաւական չեղ
լաւ, թէ բարձր կամ աւագը երկխմանց կը շահան կամ թէ ա-
ւանց մեջցաւ որ կը գոյնան մեջքին համապատասխանած մասը: Այս
ամեն հիւանդութեանց ժամանակը պէտք է Հալոսուէի դեղահատե-
մը ամենու տալու հրահանգաց համաձայն և անոր սպեղանիով չ
փել երկխմանց վարի կողմն անկողին մնալու ժամանակը: Այս
գործարանը անկողնական օգնութիւն մի պիտի մատուցանէ, այնինչ ու-
րեւ գեղերը զուր տեղը գործածուած պիտի ըլլան:

ՍՏԱՄՈՒՄԻ ԱՐՈՒՆԵԼ

Որ և է գեղ մի չկրնար ստամոքսի գործութիւնը նորոգել և
աղէկցնել զայն շուտով՝ ինչպէս այս դեղահատեմը. որորն անու-
նաւորութեան կամ վատթար կերակուրէ պատճառուած բոլոր թեթե-
ւութիւնը կըլսանեն և կը հասնին ի վերայն («Գեղ» Գեղ):
որուն գործողութիւնը կը կարգադրեն. զիջերուն աստիկ ձգան
(«Գեղ») դէպքերու մէջ սքանչելի ներգործութիւն մի ունի և իւր
ու ստամոքսի ամեն անկարգութիւնները միշտ կը բժշկէ:

ԲՈՐԲՈՐԻՄՆ ԹՈՒՐԿԱՆԱՅԻՑ (Գեղ) ՀԱՅ ԵՒ

ՀԱՐՈՒՆԵԼ

Հիւանդութեան վերաբերեալ գործարանաց հիւանդութիւն
ամեն աստեղն աւելի յաճախ կը պատահի և երբեմն աւելի վատ-
թար է: Ասոց գործողութեանց անկարգ ընթացքին աստիկ
չանները կրնան միշտ կարգադրուիլ Հալոսուէի հաշակարար դեղ-
հատեմի միջոցաւ: Ասոց շուտով կը դարմանեն արեան ուր և է
ժամանակաւ անշարժութիւնը, կըլսանեն խցուած շնորհիւ-
րը, կը բարեխանեն շնորհիւն աստիկ արագութիւնը և կը
թողնուի իւր կուտան շնորհիւն ու թողնուի դեղահատեմը ու կը
նոնաւորապէս գործելու: Այս դեղահատեմը՝ իրենց մարդոց
գործութեամբ կը սրեն արեան ամեն աղտոցութիւններն, և այ-
նքանապէս կըզօրացնեն գործութիւնը («Գեղ») ընդհանր ծիւղակ
պիտի, շնորհիւն օգնութիւն և ուրիշ թեթեւիկ տկարութեանց:

ՏԿԱՐԱՅԵԱԼ ՄԱՐԳԻՆԱՅԻՆ ԲԱԼԿԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Տկարութեան, թուրութեան և զգացաւորութեան դէպքերու
մէջ, որորն որ և է ընկան կամ գերնական չափազանցութեան
նաչ եկած են, այս դեղահատեմը այլապէս և նորոգիլ ներգործու-
թիւնը մեծապէս օգտակար է. քանզի մարտողութիւնը կըլսահա-
տատէ, մարմնիս ամեն հիւթոց թափումը կը կանոնաւորէ: Շնորհիւ
գործութիւնը կըզօրացնէ, հիւանդին միտքը կը յարգաւոր և վեր-
պէս առողջութիւնը ձեռք կը բերէ:

Հալոսուէի դեղահատեմը ամեն օգտակար դեղերն են հի-
տեալ հիւանդութեանց համար:

Հիւանդութեան	Յօդադրութեան	Թոքացաւորութեան
Մախմային աստ	Տեղաւորութեան	Ցաւ օրովայնի
Խիթ (սառն)	Ձրգողութեան	Միջազգութեան
Հարբուղի	Անարողութեան	Բորբոքաց
Ծիւրական աստ	Գալուկի	Ախտ ընդերաց
Թանշ (սառն)	Բարբախտ սրտի	Անկանոնութեան
Խոլ արանոցի	Քար կամ խիճ միջա-	Նանց
Վերնուրութեան	Նոցի	Մորթային հիւանդ
Լեղի հիւանդութեան	Գլխացաւորութեան	Թիւր
Փոքրացաւ	Ափորդիտեան աստ	Խոցողութեան

Գիտեալ արժան է որ տալու հրահանգներ կան ամեն լեզու
որոցմէ մէկ հատ կը գտնուի իւրաքանչիւր տուփին մէջ ի տեղի
կուցիւն հիւանդաց, ամեն պարագայից մէջ:

Այս դեղահատեմը, որ կըլսանուի Հալոսուէի բժշկին անձա-
կան վերատեսչութեամբ, կըվաճառուի իւր գործարանը ի Լա-
տոն, Օքսֆորդ կողմէ փողոց թիւ 533, ի դէմ 1 և 1 ուրիշ
շէնքին, 2 1/4 և 4 1/2 շէնքին տուփը, ըստ մեծութեան տիպի:

ԽՈՐԱԳԻՐ—ՏԵՐ ԼՐԱԳՐՈՅ

ԳԼԽԱՎ. ՊԱՆԴԱՐԱՐԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐԵՎԵԼԱՅԻՆ ԱՐԱՐԱՏԵԱՆ